

## ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2011 թվականի հուլիսի 14-ին կայացած համայնքի ժողովի «Խորոնք գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի I-ին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվետվության մասին» արձանագրությունից.

Համայնքի ժողովին մասնակցում էին 86 բնակիչներ և Արմավիրի մարզպետի տեղակալ Դ.Սամսոնյանը

Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արմավիրի մարզպետարանի որոշումների պահանջներից ելնելով կատարել է ներքոհիշյալ աշխատանքները.

- **Գյուղատնտեսության բնագավառ.**

Գյուղապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական աշխատանքներում: Խրախուսել է խաղողի, պտղի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության զարգացմանը: 2010թ-ի համեմատությամբ միայն 27 հա-ով պակասել է հացահատիկային կուլտուրաների մշակությունը, որի հաշվին ավելացել է բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությունները: Գարնան Գյուղտնտեսական աշխատանքները լավ կազմակերպելու նպատակով բարելավվել և հարթեցվել են դաշտամիջյան ճանապարհները:

Ոռոգման ջրի անխափան մատակարարման նպատակով 7.5մլն. դրամ արժողությամբ ներդրումային ծրագրով 1-ին կիսամյակում կառուցվել է 3.5 կմ կիսախողովակաշար Վերանորոգվել է Վ.Վարդանյան, Ա.Սանուկյան, Արարատյան, Պ.Սևակ փողոցների ոռոգման համակարգի խողովակները: Այս աշխատանքները կատարելու համար գյուղապետարանի գումարներից ներդրվել է 200.000 դրամ:

Մեծ ուշադրություն է դարձվել ոռոգման համակարգի ջրատարների մաքրման աշխատանքներին համագործակցելով ՋՕԸ-ի աշխատակիցների հետ:

Մինչև օրս համայնքի բնակիչների կողմից արտադրվել և հանրապետության շուկաներ է արտահանվել շուրջ 2000 տոննա բանջարեղեն, 10 տոննա կարտոֆիլ, որն ընթացքի մեջ է:

Ավարտվել է հացահատիկի բերքահավաքը: Հացահատիկի միջին բերքատվությունը կազմել է 1հա-ի հաշվարկով 4 տոննա, որն անցած տարվա համեմատությամբ ավելին է 1.5 տոննայով:

Բոլոր գյուղացիական տնտեսություններին ըստ հողատարածքի հատկացվել է ցինկի ֆոսֆոր մկնանման կրծողների դեմ պայքարելու համար:

• **Հողաշինության և հողօգտագործման բնագավառ.**

Ի-ին կիսամյակի ընթացքում համայնքային սեփականություն հանդիսացող մնացած շուրջ 13 հա հողեր՝ վարձակալության են տրվել համայնքում հողագուրկ ընտանիքներին և հավաքագրել վարձավճարները:

• **Քաղաքաշինության բնագավառ.**

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինությանը

• **Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ.**

Գործում է միջ համայնքային տրանսպորտը՝ գրաֆիկով: Կատարվել է 200000 դրամի մի շարք փողոցների, դաշտամիջյան ճանապարհների հարթեցման և հողի լիցքի աշխատանքներ:

Մեծ ուշադրություն է դարձվում գերեզմանատանը հողհատկացման աշխատանքներին, այն կատարվում է համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հանձնարարականի:

- **Աղբահանության բնագավառ.**

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան, այդ աշխատանքները կատարելու համար հատկացվել է 945000 դրամ գումար: Աղբը տեղափոխվում է այդ նպատակի համար նախատեսված հատուկ հողափոսի մեջ:

- **Մշակույթ և սպորտի բնագավառ.**

Կազմակերպվել է մշակույթային ու սպորտային միջոցառումներ՝ Մայրության և գեղեցկության, Հաղթանակի, Սարդարապատի օրվա կապակցությամբ: Գործում է ընթշամարտի խմբակը: Գյուղապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում երաժշտական դպրոցի, միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը ու ցուցաբերում իր աջակցությունը բոլոր հարցերում:

- **Սոցիալական բնագավառ.**

Ընթացիկ ժամանակաշրջանում գյուղապետարանը զգալի աշխատանքներ է կատարել այդ ոլորտում: Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել Հայրենական Մեծ Պատերազմի վետերանները, Արցախյան հերոսամարտի զինծառայողները, նպաստառուները, թոշակառուները: Անաչառ և անկողմնակալ վերաբերմունք է եղել նպաստառու ընտանիքների հանդեպ, ապահովվել է սոցիալական արդարության սկզբունքը: Հաճախակի ֆինանսական օգնություն է ցուցաբերվել հիվանդ և սոցիալապես անապահով ընտանիքներին: 1—ին կիսամյակում հատկացվել է 570000 դրամ գումար օգնություն սոցիալապես անապահով 16 ընտանիքների:

Համայնքի ավագանու որոշմամբ 30000 դրամ օգնություն է տրամադրվելու նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին:

• Ֆինանսներ

Հետևողական աշխատանք է տարվել և տարվում է հողի հարկերի, գույքահարկերի, տեղական տուրքերի ու վարձակալական արտադրական, հասարակական տարածքների վարձավճարների հավաքագրման ուղղությամբ:

2011թ

N	Հարկի տեսակը	2010թ ալան հազ.դրամ	1-ին կիսամյակ	2011թ ալան հազ.դրամ	1-ին կիսամյակ	%
1	հողի հարկ	8500.0	4291.1	8565.3	3194.6	37.3
2	գույքահարկ	2757.5	1039.2	3298.5	1174.8	35.6
3	շենքի վարձակալ. վարձ	394.0	197.5	150.0	-----	-----
4	վարձակալ. հողի վարձ	600.0	342.3	600.0	415.0	69.2
5	տեղական տուրքեր	280.0	131.4	280.0	76.7	27.4

2011թ-ի


N	Ծախսեր	2010թ ալան հազ.դրամ	1-ին կիսամյակ	2011թ ալան հազ.դրամ	1-ին կիսամյակ	%
1	ճանապարհների շինարարություն	2500.0	250.0	2500.0	200.0	8.0
2	աղբահանում	945.0	573.8	945.0	472.6	50.0
3	ջրամատակարարում	900.0	500.0	900.0	200.0	22.2
4	սոց օգնություն	3000.0	1445.0	2400.0	570.0	23.7
5	երիտասարդական միջոցառումներ	600.0	200.0	800.0	120.0	15.2

• Առաջնային պրոբլեմներ

1. Խմելու ջրի մատակարարման բարելավումը
2. Միջնակարգ դպրոցի սպորտ դահլիճի կառուցումը
3. Մանկապարտեզի վերանորոգումը
4. Կուլտուրայի տան տանիքի վերանորոգումը
5. Խորոնք-Առատաշեն միջհամայնքային ճանապարհի վերանորոգումը
6. Սևահողեր թաղամաս տանող բոլոր ճանապարհների բացումը
7. Սևահողեր թաղամասի էլեկտրականության կառուցումը

Ժողովի նախագահ

Քարտուղար



Ս.Նահապետյան

Ս.Կարապետյան